ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/23» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի նոյեմբերի 15-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/23-02 պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Վաճառողի առաջարկությամբ ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է:

Փոփոխության նկարագրություն՝

«Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է 10 օրացուցային օրով, ինչով պայմանավորված՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» վերտառությամբ Հավելված N 1-ում, ապրանքի «մատակարարման ժամկետը» սյունակում 2-րդ և 3-րդ չափաբաժինների մատակարարման համար «30 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինվել է «40 օրացուցային օրվա ընթացքում» բառերով»:

Փոփոխության հիմնավորում՝

<u>Պայմանագրի 8.5, 8.6 կետեր:</u>

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ОБЪЯВЛЕНИЕ

об изменениях, внесенных в заключенный договор

Судебный департамент ниже представляет краткую информацию об изменениях, внесенных 13 декабря 2019 года в договор № DD-GHAPDzB-19/23-02, заключенный 15 ноября 2019 года в результате процедуры закупки под кодом DD-GHAPDzB-19/23 организованной с целью приобретения компьютерных и копировальных оборудований и вспомогательных материалов для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа, содержащего внесенное изменение.

Причина возникновения изменения: Срок поставки товаров был продлен по предложению Продавца.

Описание изменения: Срок поставки товаров был продлен на 10 календарных дней В Приложении 1 под заглавием <Техническая характеристика- график закупки> в столбике срок поставки товара по чсти 2-ого и 3-ого лотов слова <в течение 30 календарных дней> были заменены словами <в течение 40 календарных дней>.

Обоснование изменения: Статьи 8.5, 8.6 Контракта.

Заказчик: **Судебный департамент**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
15.11.2019թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/23-02» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 13 » դեկտեմբերի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Բալդրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 15.11.2019թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/23-02» ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ, կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 10 օրացուցային օրով, ինչով պայմանավորված՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» վերտառությամբ Հավելված N 1-ում, ապրանքի «մատակարարման ժամկետը» սյունակում 2-րդ և 3-րդ չափաբաժինների մատակարարման համար «30 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «40 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 37
Հ/Հ՝ 900011005841	Հ/Հ՝ 217-001021021001
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01815551
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Գլխավոր տնօրեն՝ Ա. Բալդրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ